ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Ներսիսյան.**

Ի պատասխան Ձեր 10.05.2021թ. հ.160 գրության՝ Էրեբունի վարչական շրջանի Խորենացու փողոցի հ.105/8 հասցեում ասֆալտապատման միջոցով արհեստական անհարթություն տեղադրելու վերաբերյալ, տեղեկացվում է.

Արհեստական անհարթություն տեղադրելու առաջարկը դիտարկվել է ՀՀ կառավարության 10.01.2008թ. հ.113-Ն որոշման հ.5 հավելվածի 35-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջների շրջանակներում, համաձայն որի՝ արհեստական անհարթություններ արգելվում է տեղակայել քաղաքներում արագընթաց երթևեկությամբ մայրուղային ճանապարհներին և ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների երթևեկությամբ քաղաքային նշանակության փողոցներում: Ուստի՝ նպատակահարմար չէ վերոնշյալ հասցեում մեքենաների արագությունը սահմանափակող արհեստական անհարթությունների տեղադրումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ